ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ info_yeghegnadzor@aarhus.am, narekbeg@yahoo.com

*Ե-01/14* *10 Փետրվար*

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար

Արմեն Մովսիսյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Մովսիսյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

Վայոց ձորում արդեն շահագործվող ՀԷԿ-ների կողմից 2013 թվականին արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների, հաստատված սակագների վերաբերյալ ըստ ամիսների ու ՀԷԿ-ների:

Վայոց ձորի մարզում շահագործվող ՀԷԿ-ների կողմից 2014-ին էլեկտրաէներգիայի արտադրման մեկ կվտ էլեկտրաէներգիայի համար սահմանված սակագնի վերաբերյալ ըստ ամիսների ու ՀԷԿ-ների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող Նարեկ Բեգլարյան